

յարմարիլ, թէ և առաջին նուագին կը յաջողէ աչք խտուղել և շլացուցանել, բայց արգասիքն չեն կարող ընդհանրապէս բաւարար լինել, և երբէք Ամերիկայ՝ որ դեռ իւր հարիւրամեակն չէ տօնախմբել, չի դար Վերմանիայի դաստիարակութեան աշակերտիլ: Վերմանիայի Վերմանիայի դաստիարակութեան հասակակից Վերմանիան՝ արգարե շատ դիւտելի հեղինակ դառաւ տասն և եօթն դարուց մէջ, բայց աշխարհի աչքէն կորած Ամերիկան՝ այս իննսուն տարուան մէջ ո՛ւր թողեց Վերմանիային մեքենական արհեստագիտութեան մէջ, շոգեշարժութիւնն, ելէքտրական հեռագրութիւնն, արագատիպ մեքենայն, շոգենաւերն, և շոգեկառքն, փայտից և հրահալելեաց մշակութեան մեքենայքն, շոգեշարժ հնձելոյ գործիքն, վարելոյ արօրն, կամնասայլերն ևլն. ևլն. Ամերիկայի արգասիքն չե՞ն: Երբէք Պրանսիա՝ նորա դաստիարակութեան չի հպատակիր, ինչպէս Անգղիա չէր հպատակած Վաղղիոյ դաստիարակութեան, թէպէտ և Վաղղիա մինչև 1870-ամն Եւրոպիոյ հեգեմոնութիւնն ունէր իւր ձեռին: Ինչ դաստիարակութեան կանոններ իւր համար սեփական բոլորելէ փոքրիկ Իէլճիգայն, աւելի յարմար է իւր վիճակին, քան թէ ինչ Վերմանիա՝ իւր լայնատարած ընդարձակութեան՝ որ միշտ փոփոխում է: Փոքրիկ և ազատ Օւլիցցէրիայն արդէն իւր դաստիարակական կանոններով աւելի ապահով է, քան թէ Խտալիա իւր երեսուն միլիոնաւոր բազմութեամբ, որ ժառանգ և յաջորդ են հին Հռոմայեցւոց թէ քաջութեան և թէ բարգաւաճութեան, որ դեռ պիտի կղերական կապերէն ազատուելով՝ ապագայ

դաստիարակութենէն ստանայ: Մէկ ազգ դեռ ասած չէ՝ թէ իմ աղղային դաստիարակութեան եղանակն արդէն հասել է կատարելութեան ծայր, և աւելի քան զայս ևս՝ առաջ երթալ չէ պիտոյ: Ամերիկայ՝ իւր քառասունամերձ միլիոնաւոր բնակչօք, յորս աւելի քան զհարիւր քառասուն հազար ուսումնատեղիք կան, չունի իւր համար սեպհական առանձնատեսակ դաստիարակութեան ճանապարհ, և բնաւ իւր կանոններն չէ դնում եկամուտ ընտիր դաստիարակութեան ճանապարհին խրամատ. նա ամենայն օր ասում է, մինչև այսօր ամենայն դաստիարակութեան եղանակն լու է երևցել, թէ վաղիւ քան զայս լաւերն ևս դտանեմ՝ զնոսա ևս չեմ արհամարհեր:

(Ի. Ե. Բ. Ե. Ե.)

ԲԱՐՈՅԱԿԱՆ՝

ԲԱՐՈՅԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

Ն. Ե. Բ. Ե. Ե.

Ո՛չ Աթենաս անդիկցիկ

Ո՛չ Մեդպոմէն յերգ ներգաշակ,

Ո՛չ Երատոմէն պետ քելթութեանց

Իմ քերթուածօցն Եղերերգակ,

Ո՛չ Զադնեբգուին յերգ դիցազան,

Չշտանային ձրիցարաշխ,

Եւ զօրամիդն անցիցն ի շար

Նշոյլ ծագեալ անշամանգալ,

Չէ ինձ նեկտար ի Պարմասոս

Շնորհալտակ հեղիկոնին,

Յուսկն յոր ի մի յառնէր քերթող

Եղերս քննել ըստ առասպելին.

Եւ քիզ յաւէտ անմահ Հողի

Բիզ իմ քերթուած հանցի ի ձօն,

Գու՛նն մոտացաւ ասարթիցի
 Հնորհաճապեա ձիւր անցրօն,
 Գու՛ որ զերկիրս չորեքձայնան
 Լնուս քաղալոյժ ծով զգամար,
 Զնոյն հոգի բանիւ բոյին
 Լից անսպառ յողիս համակ,
 Գու՛ որ ընդ խոր թեւածէիր
 Ծանդնդաջօր բնդ լախածիր,
 Սերմն երկնեալ հանուրց գիւղ
 Տիեզերացս ի տարր անծիր,
 Իբր աղաւնի ձագուց ի գոլթ
 Թեւապարիակ շրջապարեալ,
 Ի հողանիւթ ջրազանգուածն
 Գոյիցս ի ծնունդ գգուսիրեալ,
 Եւնի յիս ի միտս Աստուած հզօր
 Եզ սաւառնեա յստակ ի մուտ,
 ԶԼնցս Արկածիցն ի Հայաստան
 Կենդանածնեա բանիւ զ աննիւթ,
 Ծանմահ անուն նահատակաց
 Նուիրեցից զ՛րգս յիշատակ,
 Զգիւցադանց մերոց քաջաց
 Տալ աշխարհի գործս ի հաւակ,
 Եւ յետ նոցին զանցս աղետից
 Անտերունք Տանս Հայաստանեայց,
 Ապագայից թողուլ անջինջ
 Մանրանկար գայս սուղ Արկած:

Երբ Աւստին.

Ծախտնից Աստուածն հանուրց
 Ծռնէկից հաստիչ ընթեման,
 Զիւրոց հրաշիցն ընտրեաց տեղի
 Զեղեմալայրն զՀայաստան,
 Ուր զառաջին ստեղծ զմարդ
 Փշեաց ի նա շունչ կենդանի,
 Եւ կենադործ ի կեանս անմահ
 Գործել պատուէր ետ հրամանի,
 Անդ ուր Որէն զարարութեան
 Հրաշագործեաց գործ հրաշալի,
 Այդ և մարդոյն շնորհեաց ընկեր
 Իշխել էիցս ամենայնի,
 Աստուածազոյց ամօրքն երկու
 Փառս յանպատուս լծակցէին:

Ի Բանգի զԱստուած տեսնէին
 Միշտ խոնարհեալ ի մէջ դրաստին...
 Աներեկոյ անդ աչգորէր
 Միշտ արեգակն և միշտ լուսին,
 Զի տիւն որ անդ՝ շունէր զիշեր,
 Միշտ համաստիւռ ծագէր Արիւնի,
 Էրէկայրիքն, առիւծն, արծաւի
 Նմա ի պօռն իջանէին,
 Ողջ լեզականք գային հլու
 Անդսկան ըստ հրամանին,
 Բայց նախահարցն ի ստունգանել
 Աստուածազիր պատուիրանին,
 Անիծապարտ անկան յերկիր
 Մահուամբ կենաց փոխարինին,
 Այլ Հայաստան մօր փրկութեան
 Տապանազերծ նահապետին,
 Եւ խանձարուր մարդկան սեռի
 Կենդանացաւ աշխարհ կրկին,
 Դադար լստին մեղսահանգոյց
 Ի մարդահեղձ ջրաջինջ գարու,
 Ծայն պատուհասն աշխարհաւեր
 Նոյի որդւոցն մայր կենսատու,
 Երոց հսկայք սերեցան յազդ,
 Ծաղց Տիտանեանց ի տարաշխարհ,
 Որք զառաջինն ազգի մարդկան
 Զշուն կազմեցին ի Սննար,
 Այլ ի խառնիլ լեղուաց մարդկանն
 Ծաշտարակին անդ կործանման,
 Եւ անհեղեղ աղղաղ հսկայքն
 Ծաշխարհ ամեն ողջ ցրուեցան,
 Անդէն ներքովդ որ զիցարար
 Խորհէր խժիցն տիրել մարդկան,
 Անդ Հայկ դուցադն Յապետութեան
 Բռնակալին կաց ախոյեան,
 Ի մէջ խօլիցն սպայակոյտ
 Սա խորխտապանծ ընդդէմ Բէլայ,
 Եւ հաստաղեղն իւր կորովեօք
 Զուեաց յաշխարհս Արարատայ,
 Մինչ խստութեամբ նա պատգամին
 Դարձոյց անդրէն զպատասխանի,
 Ի կուս զորեալն աղեղնափարժ
 Հան ի ծակատ պատերազմի
 Ամբոխ անթիւ հետեակաց

Յորձանս ահեղ զերթ գեա մարտն
Յարոյց անպէն Բէլ վիթխարի
Զմարգակոյտս հեղեղարար:

Այլ նահանջեաց յանդուգն այս թափ
Հայկ քաջաղեղն յիւր զօնեղն արի,
Յառաջ խաղաց բռնաւորին
Թոյց զնեան իւր շեշտակի:

Անկաւ անդ Բէլ մարտին ի խռան
Ի տէգն Հայկայ զխառապատս,
Զերծաւ այսպէս աշխարհ համայն
Եւ հայրենիք մեր քարերաստ:

ԵՐԶ ԵՐԷՐԵՐ

Այսպէս աղղիս միտպիտեաց
Հայկ ի տանէն Թորգոմական,
Եւ զահանիստս ի շէն պանծառ
Պարգեաց ցեղեցն իւր Հայաստան:

Ոյր պայազատք իշխանութեան
Յաջորդեցին քաջին սերունդք,
Եւ տոհմաձիգ կալան զերկիր
Արեաց ազգին ազատապունդք:

Անդ հոյակապ արկան հիմունք
Պերճ քաղաքաց շինից համայն,
Յեղ քոտ ցեղից իւրոքանիւր
Տանս Հայոց կացին իշխան:

Յարեաւ Արամն հսկայազօր
Միահեծան կալաւ զաշխարհս
Աշխարհակալ վառեալ ըղձիւ,
Հայաստանեայց յաւել սահմանս:

Հայրենասէր այս նահապետ
Լաւ համարէր զմահ ինքեան,
Քան զհարազատս իւր տեսանել
Օտարածեաց ոտից կոխան:

Վասն այն և խուճի կաղնեաց մարտիկ
Զաղեղնաւորս իւր պատանիս,
Զքաջս արանց զերեսաւորս
Ի պատերազմ զկորովիս:

Առ թշնամիան անդ զբացիս,
Յորոց նեղեալ էր Հայաստան,
Յաղեղն ի սուր յաջողածուն
Պանդեաց նշան զյաղթութեան:

Անդ որ նիւքսր զՄեղացին,
Շորթէր սահմանս քուշանաբոր,

Յահեղ մարտին արկ ձերբակալ
Սատակելով զամբոսն հազար:

Եւ զնոքայր կալանաւոր
Եւ յԱրմաւիր զհէնն ամենի,

Անդ ի տեսիլ անցաւորաց
Ի ծայրս մարտեաց աշտարակի:

Հայրենամթեր քաջին այս զօրծ
ՅԱսորեստան արկ արհաւիր:

Սարսեաց նինոս դարսնակալ
Տանն Հայկայ քինտինդիր:

Բայց ի սրտին թագուցեալ զօր
Շուք Արամայ կտ առեկեալ:

Զվարսակալ կրկ մարդարտեայ
Մեծարանաց ցոյց առ ի տես:

Բայց քաջայաղթ մարտից հանդէս
Յեա պնորիկ կարգեաց Արամ:

Զորից բիւրօցն ի ճակատու
Մինչ զԱսորին վանեաց Բարշամ:

Եւ յարեմուտս զՊայապիս
Ի տիտանեանց ազգէ զհակայն:

Փախտական վարեաց ի տար
Մինչ ի կղզին Ասիական:

Ուր աշխարհիս տայ բնակեաց
Խօսել լեզու զՀայկական:

Ուր յաղթութեանցն ի յիշատակ
Հայք Առաջին անուանեցան:

Այսպէս Արամ հզօր իշխան
Ընդարձակեաց զտուն հայկազանց

Որում Արայ անդ գեղեցիկն
Որդի ընդ հօր պայազատեաց:

Առ ողջախոհ վարուք, ընդդէմ
Շամիրամայ անտատիրին,

Բազմադիմի մերժեաց հրապոյր,
Անկաւ ի խռան զգատերազմին:

Յայն վայր կոծից ի պաշտամունս
Առաւածապաշտ էր Հայաստան,

Այլ Հայք մինչ զից տարան պաշտօն,
Անդ հորադատ բարձաւ իշխան:

Յետոյ ուրիմն Արք անուանիք
Այլք ի ցեղէ զարմիցն Հայկայ:

Քաջք ի քաջաց յաջորդեցին
Մինչ ցԶարմայր նախնին հեկայ:

Որ Հայ դօրօքն իւր քաղմամբս

Հաս զօրավիզն ի Տրոյիա,
Բայց յարշաւանս անդ յունական
Անկաւ ձեռամբ քաջն Աքիլեայ:

Իսկ որ Պարոյր զՍարդանաբալ
Արկ գաշնկէց ընդ Վարբակեայ,
Ի պերճ պսակ անդ զառաջինն
Թաղաւորեաց տանն Հայկայ:

Բայց Տիգրանայ ոչ որ նման
Յարեաւ յազգէն քաջ նախարար,
Որ զՀայս թափեալ ի լծոյ ազգաց,
Ձազոս ընդ լծով արկ առնաբար:

Որ ի կենցաղս առաքինի
Արդարադատ էր կառավար,
Ռամիկն և զՃոխ ի հայրական
Տաճէր ի խնամն հաւասար:

Սա առաջին անդ բազմացոյց
Մթերս ոսկոյ ի հայրենիս,
Եւ հասակաց իւրաքանչիւր
Զգետ պէսպէս զոյն գեղանիս:

Ոյր հետեակ մարտիկ զօրաց
Համակ զինեալ ի զէն զարդու,
Հեծելամարտն յարծաթափայլ
Շողայր սուսեր շող փայլածու:

Յոր Աժդահակ ակնկառոյց
Ի կասկածանս կայր ի խնթի,
Ընդ Հայկազունն Տիգրանայ
Յաջակցութիւն ընդ Սիրոսի:

Յանրջականս ի խօլ տեօիլ
Զցայգ անքուն խառփէր յոգի
Հուսկ ընդ Տիգրան եզ գաշն կեղծ,
Զոյր քոյրն առ կին զՏիգրանուհի:

Բայց չիք ծածուկ ինչ աշխարհի
Այս դաւ յայտնի լեալ Տիգրանայ
Վասն յրսկիղըն ահեղ մարտին
Բաշխեաց մահ դառն Աժդահակայ:

Զփիշապազունս յազգէն Մարաց
Գաղթեաց ի Հայս արս բիւր մի,
Քաղաքացոյց նոքօք զաշխարհս
Յարձակ գաւառն Նախջուանի:

Սմա ապա տեղակայեաց
Ի քաջէն քաջ Վահագն արի,
Հարադատ հօրն նման որդի,
Զոր Տիգրանայ ծնաւ Զարուհի:

Եւ զի՞ կցիլ աստ զառասպելն,
Երկն ի ծովէն ծնաւ ծիրանի,
Վահագն էր նա յեղբարս կրտսեր,
Հրաշագեղն այն պատանի:

Աշխուճքն էին արեգակունք
Հերքն հրոյ նմանահանդոյն,
Ընդ փիշապաց կռուել քաջին
Զերթ Հերակեայ եթող զանուն:

Այլ զինչ ստուեր փառք վաղանցիկ
Եւ կեանք մարդոյ յամաց ի շար,
Գահ պետութիւն չունին կոյան
Եւ անկայուն է միշտ աշխարհ:

Մինչ Աղէքսանդր կայաւ ի բոին
Զտիեզերս աշխարհակալ,
Եւ Հայկազանցն անդ պետութիւն
Զհետ նորա առնու զաղար:

Եւ ի՞նչ երբեք

Զի՞նչ ոչ արար ձեռն հօր
Անդ Հայկազանցն յոսկեղարու,
Երբ պետութեան Ազգին ի գահ
Վերամբարձան արք ահարկու:

Նախնի ազգաց պէս զհայրենիս
Եղին ի կարգ քաղաքական,
Եւ աշխարհի ճոխ շինութեամբ
Լցին անթիւ զՀայաստան:

Յերկհազարեան ամաց շրջանս
Նախանձիկ գահ պերամբարձ,
Մինչ Հայկազունք որդի ընդ հօր
Պայազատէր ի թիւս ազգաց:

Հանրածաւալ փողփողեցաւ
Ի քառածագս դրօշ յազմութեան,
Սարսէր երկիր համայն զրացի
Ուր արշաւէր Հայ զօրական:

Դու Հայաստան, ի դաշն համայր
Խաղաղութեան բուրբէր շունչ,
Յայնժամ էիր դրախտ փառաց
Երանութեան վայր անշունչ:

Աթոռ էր քո արքայութեան
Եւ արքայից խումբ համազօր,
Որոց պատգամքն անզուգական
Ում խոնարհէր աշխարհ բոլոր:

Զի երբ կամաց և հրամանին
Հայն հպատակ էր արքայի,
Եւ անդամոց ընդ իւր զխոյն
Միօրինակ գործէր ոգի :

Թագաւորէր միահեծան
Յայնժամ՝ ազգիս ողջ թագակալ,
Ակօսն ուր նախ արկաւ յերկիր
Մեր հայրենիքն էր ոսկեղար:
Երբ մի էր ազգ և մի սերունդ,
Անդ միաբան Հայն համագունդ.
Այլ միութեան փոյթ փեռեկտումն
Մինչ խոնեցաւ ազգ եկամուտ:

Արշակունին յահիլն իւր թափ
Ահեղասատ ի ծագս ազգաց,
Ոգին Հայոց շնէր ի մարտ
Եւ Հայ արիւն էր ոյժ բազկաց:
Մինչ համարիւնք ի ցեղս օտար
Ազգակցեցան աշխարհամոք,
Մուտ խորհուրթիւն ի համազգիս,
Ատելութեան հարաւ բորբոք :

Յարեաւ ի կուլ տոհմ՝ ընդ տոհմի
Եւ տուն ընդ տուն մղէր նախանձ,
Անդ Հայաստան զբիւր չարեաց
Քամեաց մութիւր յիւր Կառն Արկած:
Անգոյթ, դու հիմ՝ չաճես զգոյթ
Ընդ մահ որդւոցդ անմահաշունչ,
Սուր տաք ընդ մուկս անցեալ ոգւոյր,
Ցաւոտ սրտիդ չարքես միմունջ :

Զուրկ յԱրքայից, խմբից զօրաց
Այժմ՝ անիշխան կաս ամայի,
Լաց դու Այրիդ, լաց անձկայրեաց
Իբրեւ զբու յաւերակի :

Այս քո քաղաք ցահ արքունի,
Յոյր աւերակս հաւուց ճիւն,
Պոյր բուն քեզ անդ ընկերչակի
Դերբուկք հեծեն լեռնահանգոյն:

Յոյր վայր խաղայ աստ լուութիւն
Նախնի քաղաք քո յԱրմաւիր,
Ուր հողակոյտ տեսիլ տխուր
Եւ արքունիք հիմանցն ի խիլ :

Ուր են քո փառք նախանձ ազգաց,
Յոր Հայաստան, դու պծնէիր,
Զի՞ քող ի թուխպ կաս դու լքած

Մերկ ծիրանեաց յարքայակիր,

Ուր աւամիկ խումբ հազարաց

Եւ արիւնոտ անհուն փրկիւք,

Յոյր յորդուրթիւն անշամանգաղ

Դիշերանայր այգուց երկինք:

Ուր քո Մծբին, Երուանդաշատ

Եւ Արտաշատն, Արշակաւան,

Եւ մարդաշատն հոսակ քո Անին,

Դիցն Ազգիս վայր Քաղնեաց աւան :

Եւ ի նոսին զահ զահակալ

Պալատականքն Աւագորեար,

Որք փայլեցան ի խնամս ազգին

Ի տան Հայոց իբրու գոհար :

(Անշունչ ի յաւերա-մահիւն).

ԱՐԷԼ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱԶԳԱՅԻՆ

ԿՈՆՏԱՆՍ ԵՒ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ենցեալ Յունիս ամսոյ մէջ՝ Վեհ.
Հայրապետ հեռեկալ Պոնդակը ուղղեց
Ռուսաստանի մէջ եղած Հայոց թեմ.
Աւենից և Հոգեւոր կառավարութեանց:

« Կանոնաւոր ներդաշնակութիւն եղա-
նակաց երգոց և Հարականաց ի պաշտա-
մունս Ակեղեցւոյ անշուշտ խոր իմն ներ-
գործեն զտպաւորութիւն ի սիրտս հաւա-
տացելոց ի Վրիստոս, և շարժեն զզգաց-
մունս նոցա ի ջերմեռանդն Աստուածաշա-
տութիւն և ոգեւորեն երկնային սիրով .
ուստի և Ակեղեցին Հայաստանեայց ա-
ռանձին իմն ուշադրութեամբ կանխադոյն
խնամք և փոյթ տարաւ նա և ձայնազը-
րութեան արհեստին վասն կանոնաւոր ե-
րաժշտութեան և երգեցողութեան յԱ-
կեղեցիս, որպէս է տեսանել ի վաստակս
երանելի նախնեաց մերոց: